

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Գ. Ա. ԲՐՈՒՏՅԱՆ

ՀՍՍՀ ԳԱ քղրակից-անդամ

§ 1. Փիլիսոփայության և լեզվի բարդ ու բազմերանգ փոխհարաբերության մեջ առանձնակի նշանակություն ունեն երեք խնդիրներ, որոնք փիլիսոփայության պատմության ընթացքում այս կամ այն չափով ուշադրության են արժանացել տարբեր դպրոցների ներկայացուցիչների կողմից ու տարբեր կերպ լուծվել: Դրանք են՝ լեզվի փիլիսոփայությունը, լեզվաբանական փիլիսոփայությունը և փիլիսոփայության լեզուն:

Լեզվի փիլիսոփայության հարցերի քննարկումը սկսվել է դեռևս այն ժամանակներից, երբ սաղմնավորվել է ինքը փիլիսոփայությունը որպես գիտելիքների որոշակի համակարգ, մի կողմից, և երբ սկսել են իմաստավորել լեզվի էությունն ու բնույթը, իմացական դերն ու նշանակությունը լեզվաբանության մեջ՝ մյուս կողմից: Արդեն մ. թ. ա. V դ. լեզվական երևույթի վերաբերյալ սոփիստների պրպտումները վկայում են ոչ միայն լեզվի փիլիսոփայության հետաքրքիր քննարկումների, այլև մինչ այդ արդեն տվյալ պրոբլեմի շուրջ եղած հետաքրքրությունների և հարցադրումների ուսումնասիրության մասին:

Լեզվի փիլիսոփայությունը հատուկ տեղ գրավեց մեր դարի փիլիսոփայական հետազոտություններում, մասնավորապես նեոպոզիտիվիստական համակարգերում: Բացարձակացնելով լեզվի փիլիսոփայական հարցադրումների և նրանց հնարավոր վճիռների դերը փիլիսոփայությունում և փիլիսոփայության համար, միակ փիլիսոփայություն ենոպոզիտիվիստները հայտարարեցին լեզվաբանական փիլիսոփայությունը:

Փիլիսոփայության պատմության ընթացքում պակաս ուշադրություն է դարձվել փիլիսոփայության լեզվի պրոբլեմի վրա: Մինչև այժմ հանգամանորեն քննարկված չէ փիլիսոփայության լեզվի պրոբլեմը, քիչ թե շատ սահմանագծված չէ փիլիսոփայության լեզուն հասկացության ծավալը, առաջադրված չէ հարցերի այն համակարգը, որոնց ուսումնասիրությունը կարող է հանգեցնել փիլիսոփայության լեզվի դիտական մշակմանը: Եվ, այնուամենայնիվ, պետք է նշել, որ փիլիսոփայության լեզվի հետազոտության պահանջն այս կամ այն չափով առաջադրել են փիլիսոփայության դասականները՝ բացահայտ կամ ոչ-բացահայտ ձևով: Ե՛լ ավելի նկատելի է այն, որ փիլիսոփայության պատմության դեռևս հին շրջանից սկսած, փիլիսոփայության դասականներն այս կամ այն առիթով նշել են, ընդգծել փիլիսոփայական հետազոտություններում բառերի, լեզվական դարձվածքների օգտագործման հատուկ դրսևորումները և դրանց նկատմամբ ունեցած իրենց պահանջները: Վերջիններս ըստ էության փիլիսոփայության լեզվի ստեղծման սկզբունքային խնդիրներ են հետապնդել:

§ 2. Դեռևս Հին աշխարհում տարբեր փիլիսոփայական դպրոցների ներկայացուցիչներ փիլիսոփայական քննարկումների նախնական պայման էին համարում օգտագործվող բառերի իմաստի ճշգրտումը: Հայտնի է Սիմպլիցիոսի քննադատությունը որոշ հին հունական փիլիսոփաների հասցեին, որոնք, իր կարծիքով, ճիշտ չէին օգտագործում որոշ բառեր¹:

Այն հանգամանքը, որ Արիստոտելը «Կատեգորիաներում» իր առջև դրված պրոբլեմները քննարկելիս շատ հաճախ գիմում է օգտագործվող բառերի նշանակության պարզաբանմանը և դրանով է սկսում իր ստեղծագործությունը², սովորաբար, համարվում է հարցերի քննարկման ինքնըստինքյան հասկանալի եղանակ: Քննարկվող նյութն է թելադրում նման մոտեցումը: Սակայն հարկ է ուշադրություն դարձնել այն բանին, որ «Կատեգորիաները» ամենևին էլ նշված իմաստով բացատրություն չեն Ստագիրտի քննարկման շրջանակներում: Օգտագործվող բառերի ու լեզվական դարձվածքների վերլուծությանը Արիստոտելը դիմում է նաև «Մետաֆիզիկայում» և այլ գործերում:

Բառերի իսկական օգուտի, լեզվի բնական առավելությունների և թերի կողմերի բացահայտումը, Զ. Լոկի կարծիքով, կարևոր է բառերի նշանակության անորոշությունից խուսափելու համար: Իսկ առանց վերջինիս, նրա պնդմամբ, չի կարելի քիչ թե շատ պարզ ու հետևողականորեն դատել իմացության մասին³:

Ֆ. Բեկոնը այն համոզումն է դավանում, թե մարդիկ հավատում են, որ իբր իրենց բանականությունն իշխում է բառերի վրա: Սակայն լինում է այնպես, որ բառերն իրենց ուժն ուղղում են բանականության դեմ: Այս ընդհանուր դրույթն էլ ավելի է անհանգստացնում անգլիական մտածողին, քանի որ նշված վտանգի հետևանքով փիլիսոփայությունը, ինչպես և գիտությունները, դառնում են սոփիստական և անգործոնյա: Եվ այսպես, գիտնականների հանդիսավոր քննարկումները հաճախ վերածվում են բառերի և անունների մասին վիճաբանությունների, մինչդեռ Ֆ. Բեկոնի եզրահանգմամբ, ավելի ողջախոհ կլինեի, եթե հետևելով մաթեմատիկոսների սովորույթին և իմաստութայնը, խնդրի քննարկումն սկսվեր բառերից և սահմանումների միջոցով կարգի բերվեին վերջիններս⁴:

Զ. Բեկլին զգուշացնում է բառերի խաբեությունից: Միևնույն ժամանակ բացարձակացնելով բառերի վերլուծության նշանակությունը փիլիսոփայությունում, նա ենթադրում էր, թե բավական է մի կողմ նետել բառերի ծածկոցը, որպեսզի պարզորեն տեսնենք իմացության հիասքանչ ծառը⁵:

Փիլիսոփայական համակարգում կիրառվող բառերի, լեզվական դարձվածքների ստուգաբանության, նախնական վերլուծության անհրաժեշտությունն ընդգծելով, Հեգելը դիմում է կոնկրետ օրինակների վերլուծությանը: Նա հատուկ քննության նյութ է դարձնում «լինել», «գոյություն ունենալ», «բերել», «բերել», «բերել»:

¹ W. K. C. Guthrie, A History of Greek Philosophy, vol. 2, Cambridge University Press, 1969, p. 271 և այլն:

² Аристотель, Категории, 1а, 1б и т. д.

³ Дж. Локк, Избранные философские произведения. т. 1, М., 1960, стр. 404.

⁴ Ф. Бэкон, Новый Органон, М., 1938, стр. 46—47.

⁵ Дж. Беркли, Трактат о началах человеческого знания, СПб., 1905, стр. 58.

«իրականություն», «գոյ», «օբյեկտիվություն» և նման կարգի այլ բառերի օգտագործումը փիլիսոփայությունում և նրա սահմաններից դուրս:

Հատկապես պետք է նշել այն հանգամանքը, որ դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի դասականները մեկ անգամ չէ որ իրենց փիլիսոփայական հետազոտություններում բանավեճի, քննարկման, եզրահանգման պայմանն օգտագործվող բառերի իմաստի ճշգրտումն են համարում:

Տվյալ դեպքի առանձնահատկությունը ոչ միայն այն է, որ բառերի և լեզվական դարձվածքների նախնական վերլուծությունը դիալեկտիկական մատերիալիզմի համակարգում կարևոր նախապայման է համարվում հատուկ հարցադրումների և նրանց հետևողական պատասխանների համար: Քննարկվող հարցի կոնտեքստի տեսակետից բնորոշ է նաև այն հանգամանքը, որ նեոպոզիտիվիզմի և հատկապես լեզվաբանական փիլիսոփայության քննադատությունը դիալեկտիկական մատերիալիզմի ներկայացուցիչների կողմից ամենևին էլ չի նշանակում փիլիսոփայական հետազոտություններում բառերի ու լեզվական դարձվածքների վերլուծության նշանակության ժխտում: Այդ քննադատությունն ուղղված է ոչ թե նշված վերլուծության դեմ, այլ նման տիպի վերլուծության դերի բացարձակացման և այն (=վերլուծությունը) փիլիսոփայական հետազոտության միակ խնդիրը համարելու դեմ:

§ 3. 2. Լոկն այն ծրագրային դրույթն է ձևակերպել, թե իմացությունը շատ ավելի է առնչվում բառերի հետ, քան մենք կարծում ենք: Ինչու՞. Այս հարցի պատասխանը փորձել են տալ փիլիսոփայության դասականները: Հեգելը յուրովի է մեկնել խնդրո առարկան: Ինչպես նշում է Վ. Ի. Լենինը, «սովորաբար մեռյալ թվացող հասկացությունները Հեգելը վերլուծում և ցույց է տալիս, որ գրանցում շարժում կա»⁶, Վ. Ի. Լենինը հանգում է այն եզրակացության, որ հասկացություններն ունեն համապարփակ ճկունություն, որը հասնում է հակադրությունների նույնության: Այս կամ այն եզրահանգումները հաճախ պայմանավորված են այն բանով, թե ինչպես է կիրառվում հասկացությունների ճկունությունը: Եթե այն կիրառում ենք սուբյեկտիվորեն, հանգում ենք էկլեկտիկայի և սուփիստության: Իսկ եթե այն կիրառում ենք օբյեկտիվորեն, ապա մեր մոտեցումը դիալեկտիկական է, ճիշտ ենք արտացոլում աշխարհի հավերժ զարգացումը⁷:

Պետք է հատկապես նշել այն հանգամանքը, որ հասկացության համապարփակ ճկունությունը բառում, լեզվական դարձվածքում կարող է ձևավորվել և արտահայտվել այն դեպքում, երբ այդ լեզվական կրողը նույնպես ճկուն է իր բնույթով:

Բառի և հասկացության նման ըմբռնմամբ միասնական լինելը հավանաբար այնքան լավ են զգացել հին հույները, որ միևնույն «լոգոս» տերմինով նշանակել են ինչպես միտքը, այնպես էլ խոսքը:

Բառի ճկունությունը դրսևորվում է տարբեր ձևերով և եղանակներով: Խոսքի մեծ վարպետ Ալիգիերի Դանտեն տարրերում է բառերի մակերեսային և խորքային նշանակությունները և գտնում, որ նայած բառի օգտագործմանը,

⁶ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 38, էջ 125:

⁷ Նույն տեղում, էջ 125—126:

ներա նշանակություններից մեկը կարող է վերածվել իր հակադրությանը⁸, վերջինս Հեգելը համարում է մասնավորապես հատուկ գերմաներենին⁹։

Բառի ճկունությունը հնարավորություն է ընձեռում նրա բազմիմաստության համար։ Ընդհանուր իմացական առումով դա մեծ հնարավորություններ է տալիս ամրագրելու ու հաղորդելու մարդկային մտքերի բազմերանգությունը։ Սակայն միևնույն ժամանակ այն որոշակի դժվարությունների է հանգեցնում դիտական հետազոտությունների արդյունքներն ամփոփելիս։ Այդ հաղթահարելու նպատակով գիտությունների զարգացման ներքին օրինաչափությունները հանգեցրել են գիտության լեզվի անհրաժեշտության գաղափարին։

§ 4. Գիտության լեզու ասելով սովորաբար հասկանում են տվյալ գիտության հասկացության համակարգը¹⁰։

«Գիտության լեզուն» կարելի է օգտագործել որպես ընդհանուր հասկացություն, որի ծավալն ընդգրկում է մի շարք այլ հասկացություններ՝ մաթեմատիկայի լեզու, քաղաքատնտեսության լեզու և այլն։ Պետք է նշել նաև, որ գիտությունների զարգացման ներկա փուլում, երբ առկա են գիտությունների բազմաթիվ տարբերակումներ, առաջանում են նաև գիտությունների նոր, մասնակի լեզուներ։ Գոյություն ունի ոչ միայն մաթեմատիկայի, այլ նաև՝ մաթեմատիկական վերլուծության, հանրահաշվի, երկրաչափության լեզու և այլն։ Առանց այդ լեզուների իմացության հնարավոր չէ ոչ միայն հետազոտությունը տվյալ բնագավառում, այլև քննարկվող հարցերի ըմբռնումը և պատկերացումը։ Հանրամատչելի ձևով շարադրելով ժամանակակից մաթեմատիկայի մի շարք պրոբլեմները, անգլիացի հայտնի մաթեմատիկոս Ու. Սոյերը նշում է, թե մաթեմատիկական վերլուծության ուսումնասիրելիս կարևորը մաթեմատիկական վերլուծության լեզուն է¹¹։ Անդրադառնալով հանրահաշվին, նա գրում է. թե մինչ այսօր գիտության մեջ շատ բան կախված է պարզագույն հանրահաշվի լեզվից լավ և գրագետ օգտվելու ունակությունից¹²։ Ու. Սոյերը նպատակահարմար է համարում անցումները մի գիտության լեզվից այլ գիտության լեզվին՝ ուսումնասիրվող պրոբլեմների էությունը բացահայտելու նպատակով։ Նրա մեկնաբանմամբ, հանրահաշվի լեզվից երկրաչափության լեզվին անցումն ունի երկու առավելություն։ Մի կողմից՝ այն հնարավորություն է տալիս հանրահաշվի ստույգ տեխնիկան կիրառել երկրաչափական այնպիսի արդյունքներ ստանալու համար, որոնք ակնառու երևակայության տեսանկյունից ակնհայտ չեն։ Մյուս կողմից՝ դա հնարավորություն է տալիս ձևական հանրահաշվական արդյունքները ներկայացնել պատկերավոր, նկարների և գծագրերի ձևով։ Այդ վերջինները նոր կյանք են տալիս հանրահաշվական հավասարումներին¹³։

Գիտության լեզվին նախ և առաջ բնորոշ է օգտագործվող բառերի միանշանակությունը։ Այդ տեղի է ունենում մեծ մասամբ սիմվոլների կիրառմամբ։ Սակայն բացի այդ ընդհանուր հատկությունից, այս կամ այն կոնկրետ գիտության լեզուն ունի իր առանձնահատկությունները։ Վերջիններս երկու կար-

⁸ А. Данте, Малые произведения, М., 1963, стр. 115.

⁹ Гегель, Соч., т. V, М., 1937, стр. 7.

¹⁰ Р. Карнап, Философские основания физики, М., 1971, стр. 106.

¹¹ У. Со́йер, Путь в современную математику, М., 1972, стр. 15.

¹² Նույն տեղում, էջ 20։

¹³ Նույն տեղում, էջ 28։


դի են: Այդ առանձնահատկությունները նախ դրսևորվում են տվյալ գիտության հասկացութային կազմում: Յուրաքանչյուր գիտություն գործ ունի որոշ հասկացությունների կազմի հետ, որը բնորոշ է գիտելիքների տվյալ բնագավառին: Ընդհանուր է, որ մի գիտություն չի սահմանափակվում միայն նշված հասկացութային կազմի կիրառմամբ: Այս վերջինը զգալիորեն ընդարձակվում է ինչպես հարակից գիտությունների հասկացութային կազմերի, այնպես էլ մեթոդաբանական (=փիլիսոփայական) բնույթի և առօրյա կյանքից վերցրած հասկացությունների հաշվին: Սակայն այս հանգամանքը չի կարող սքողել տվյալ գիտության հասկացութային կազմի առանձնահատկությունը և տարբերությունն այլ գիտությունների հասկացութային կազմերից, որքան էլ համեմատվող գիտությունները սերտ կապի մեջ գտնվեն կամ հարակից լինեն:

Ուշադրություն դարձնենք գիտությունների լեզվից վերցրած հետևյալ օրինակների վրա.

$$x+y=y+x \quad (1)$$

$$\int \frac{dx}{x^2-x+2} \quad (2)$$

$$\angle ASB = \angle A_1S_1B_1 \quad (3)$$



Մաթեմատիկայի և քիմիայի տարրական (դպրոցական) իմացությունն արդեն հնարավորություն է տալիս նկատելու այն տարբերությունը, որ կա մի կողմից (1)–(3) և մյուս կողմից (4) օրինակների միջև: (1), (2) և (3) օրինակները պատկանում են մաթեմատիկայի լեզվին, (4)–ը՝ քիմիայի: Ավելին, դժվար չէ նկատել, որ (1)–ը պատկանում է հանրահաշվի, (2)–ը՝ մաթեմատիկական վերլուծության, իսկ (3)–ը՝ երկրաչափության լեզվին:

Այս եզրակացություններին կարելի է հանգել այսպես ասած վիճակագրական մոտեցման դեպքում: Եթե համեմատենք տարբեր գիտությունների լեզուները գործողության մեջ, կնկատենք մի կարևոր հատկություն ևս: Այդ այն է, որ որոշակի տարբերություն կա գիտությունների լեզուների միջև՝ նրանց կիրառման տեսակետից: Այսպես, օրինակ, քիմիայի լեզուն (=քիմիական բանաձևերի օգտագործումը) շատ հաճախ ցույց է տալիս, թե ցանկալի արդյունք ստանալու համար ի՞նչ հաջորդականությամբ պետք է կատարվեն անհրաժեշտ պրոցեսները: Բավական է խախտել այդ պրոցեսների կամ քայլերի հաջորդականությունը և արդյունքը բոլորովին այլ կլինի: Գիտությունների լեզուների այս երկրորդ կարգի առանձնահատկությունը պայմանականորեն անվանենք շարահյուսական, ի տարբերություն վերը նշված առաջին կարգի առանձնահատկության, որը կոչենք իմաստաբանական:

Չմոռանալով ամեն մի դասակարգման պայմանական բնույթը և, հատկապես, գիտության լեզուների հատկությունները իմաստաբանականի և շարահյուսականի բաժանման պայմանականությունը, կարելի է ասել, որ տեսական հետազոտությունների բնագավառում մեծանում է գիտական լեզվի շա-

րահյուսական ֆունկցիայի դերը, ի հաշիվ իմաստաբանական ֆունկցիայի Աքսիոմատիկ-դեդուկտիվ համակարգերում արտակարգ է տվյալ գիտության լեզվի շարահյուսական ֆունկցիայի դերը:

§ 5. Փիլիսոփայության համար բնորոշ է որոշ հասկացությունների կազմ: Դա արտացոլվում է այն փաստում, որ կան փիլիսոփայական բառարաններ: Առաջին մոտեցման դեպքում կարելի է նշել, որ փիլիսոփայական բառարանն էլ կոչված է ամփոփելու փիլիսոփայական գիտելիքին առանձնահատուկ տեղումնները: Այդ վերջիններն էլ դրսևորում են փիլիսոփայության լեզվի իմաստաբանական կողմը:

Սակայն, եթե համեմատելու լինենք ցանկացած գիտության լեզվի կազմը իմաստաբանական տեսակետից առօրյա լեզվի համապատասխան կազմի հետ մի կողմից, փիլիսոփայության լեզվի և առօրյա լեզվի այդ նույն կազմերը մյուս կողմից, կնկատենք մի կարևոր հանգամանք: Փիլիսոփայական լեզվին ավելի շատ է սերտաճվել առօրյա լեզվի իմաստաբանությունը, քան թե վերջինս գիտության այլ լեզվի հետ: Դա պատահական չէ և բխում է փիլիսոփայության առանձնահատկությունից: Բանն այն է, որ շնայած փիլիսոփայությունը հանդես է գալիս որպես գիտական գիտելիքների որոշակի համակարգ, այն միևնույն ժամանակ աշխարհայացքային առանձնահատուկ ֆունկցիա ունի: Այս վերջինն առաջացել է փիլիսոփայական գիտելիքի առաջացման հետ միասին և իր արմատներն ունի մարդու ձևավորման ակունքներում: Ֆ. Էնգելսը նկատում է, թե «արդեն իսկ այն չափազանց հեռավոր ժամանակից սկսած, երբ մարդիկ տակավին չունենալով ոչ մի գաղափար իրենց մարմնի կազմվածքի մասին և չկարողանալով բացատրել երազները, եկան այն պատկերացման, թե նրանց մտածողությունն ու զգայությունները նրանց մարմնի գործունեությունը չեն, այլ ինչ-որ հատուկ նախասկիզբը հոգու, որ ապրում է այդ մարմնում և նրան թողնում մահվան ժամանակ,— արդեն այդ ժամանակից սկսած նրանք պետք է խորհրդածեն այդ հոգու դեպի արտաքին աշխարհն ունեցած հարաբերության մասին»¹⁴:

Homo philosophicus,— այսպես անվանեց մարդուն Փիլիսոփայական ընկերությունների միջազգային ֆեդերացիայի գլխավոր քարտուղար, շվեյցարացի փիլիսոփա Ա. Մերսյեն XV համաշխարհային փիլիսոփայական կոնգրեսի օրերին թղթակիցների հետ ունեցած հարցազրույցում:

Մարդը որպես փիլիսոփայող էակ իրոք օգտագործում է բազմաթիվ հասկացություններ, որոնք փիլիսոփայական բնույթ ունեն և այս կամ այն չափով պետք է կազմեն փիլիսոփայության լեզվի իմաստաբանական կողմը: Բայց, իհարկե, ամենևին էլ ոչ այն բովանդակությամբ, ինչ այդ հասկացություններն օգտագործվում են «փիլիսոփայող էակի» կողմից: Ըստ էության «փիլիսոփայող էակի» փիլիսոփայական բառապաշարն արտահայտում է ավելի շուտ մտապատկերներ, պատկերացումներ, քան հասկացություններ: Փիլիսոփայական բնույթի այդ մտապատկերներն այս կամ այն չափով, շատ հաճախ զգալիորեն, տարբերվում են փիլիսոփայության լեզվի իմաստաբանության մեջ ընդունված համապատասխան նշանակությունից:

¹⁴ Ֆ. Էնգելս, Լյուդվիգ Ֆոյերբախը և գերմանական կլասիկ փիլիսոփայության վախճանը, Երևան, 1961, էջ 28:

Ջոն Լոկն իրավամբ տարբերում է բառերի քաղաքացիական օգտագործումը փիլիսոփայական կիրառումից: «Այդ երկու տեսակ կիրառումները միանգամայն տարբեր են... Մեկում բավարար է ավելի պակաս ստուգություն, քան մյուսում»¹⁵: Նա այն միտքն էր ընդգծում, որ բառերի սովորական օգտագործումն անբավարար է փիլիսոփայական կշռադատությունների համար¹⁶:

Հեգելը գտնում է, որ փիլիսոփայությունն իրավունք ունի առօրյա կյանքի լեզվից ընտրել այնպիսի դարձվածքներ, որոնք մոտ են փիլիսոփայության պահանջներին¹⁷:

Այսպիսով, առօրյա լեզվի բառերը փիլիսոփայության համակարգում սովորաբար կիրառվում են իմաստային որոշ ճշգրտումներից հետո: Այս հանգամանքից բխում է որոշակի եզրակացություն, որի վրա կանգ կառնենք ստորև (տե՛ս § 8), մի քանի հարակից հարցեր քննարկելուց հետո:

§ 6. Փիլիսոփայության առանձնահատկությունից է բխում նաև այն, որ ոչ մի գիտություն այնքան լայն ել ու մուտ չունի դեպի մյուս բոլոր գիտությունները, ինչպես փիլիսոփայությունը: Նման «շփումն» իր հետքն է թողնում փիլիսոփայության լեզվի իմաստային կողմի վրա: Փիլիսոփայության լեզուն անհրաժեշտաբար ընդարձակվում է այլ գիտությունների հասկացութային կազմի հաշվին: Եթե համեմատելու լինենք, ասենք, վերջին տասնամյակի փիլիսոփայական հետազոտությունների հասկացութային կազմը նախորդ տարիների հետազոտությունների լեզվի հետ, հեշտությամբ կարելի է նկատել այն փոփոխությունները, որ կրել է փիլիսոփայության լեզուն իմաստաբանական տեսանկյունից. այն հարստացվել է բնական և հասարակական գիտությունների նորագույն նվաճումների վերիմաստավորմամբ:

Սակայն չպետք է, ենթադրել, թե փիլիսոփայական գիտությունը պարզապես կամ, ավելի խիստ արտահայտվելու դեպքում՝ մեխանիկորեն ներառում է այլ գիտությունների նորագույն հասկացությունները, ինչքան էլ դրանք կարևոր նշանակություն ունենան փիլիսոփայության հետագա զարգացման համար: Այս հարցի էությունը պարզելիս չպետք է մոռանալ փիլիսոփայական դիտելիքի այն կարևոր առանձնահատկությունը, որի համաձայն փիլիսոփայությունը և կոնկրետ գիտությունները միեկնույն օբյեկտը հետազոտում և նրա հատկությունները բացահայտում են ամփոփում են վերացարկման ու ընդհանրացման տարբեր մակարդակներում: Հետևաբար, այլ գիտությունների հաշվին իր հասկացութային ապարատն ընդարձակելիս կամ վերանայելիս փիլիսոփայությունը յուրովի վերիմաստավորում է ներմուծող հասկացությունները, այլապես դրանք իրենց համապատասխան տեղը չեն գտնի փիլիսոփայության լեզվի իմաստաբանական համակարգում: Իսկ թե ինչ է նշանակում այդ «յուրովի վերիմաստավորումը», այդ մասին ևս ստորև:

§ 7. Այլ գիտությունների հասկացութային կազմից փիլիսոփայությունում օգտվելիս պետք է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք ևս: Բանն այն է, որ կոնկրետ գիտություններում հաճախ օգտագործվում են փիլիսոփայական բնույթի երևույթների նշանակող բառերը որոշ, առանձնահատուկ իմաստով, տվյալ գիտության առանձնահատկությամբ ինչ-որ չափով շղարշված: Հարցն

¹⁵ Д. Ж. Локк, Избранные философские произведения, т. 1, стр. 470.

¹⁶ Նույն տեղում, էջ 473:

¹⁷ Гегель, Соч., т. VI, М., 1939, стр. 160.

է՛լ ավելի բարդ բնույթ է ստանում, երբ կոնկրետ գիտության ներկայացուցիչն է փիլիսոփայությունն ընդհանրացնում տվյալ բնագավառի գիտական նվաճումները, մի երևույթ, որ ոչ սակավ է դիտարկվում: Այս դեպքում պետք է նկատի ունենալ Ու. Սոյերի այն միանգամայն տեղին դիտողությունը, որ «մասնագետները միմյանցից տարբերվում են ոչ միայն իրենց գիտելիքներով, այլ նաև իրենց կյանքի փիլիսոփայությամբ և այն բանով, թե ի՞նչն են նրանք համարում կարևոր»¹⁸:

Նման պարագաներում հետազոտողը լեզուն պետք է դիտարկի առնվազն երեք տեսանկյունից՝ առօրյա կենսափորձի, բնագիտության և փիլիսոփայության: Բնական է, որ այսպիսի պայմաններում լեզվի վերլուծությունն առանձնահատուկ նշանակություն է ստանում:

Ըստ էության նման վերլուծության է դիմում Ն. Բորը, երբ գործառում է այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ «բնագիտ», «բանականություն», «գիտելիք» և «հավատ», «երևույթ», «չափում», «գիտակցական», «ճշմարտություն» և այլն, այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են՝ «գիտումը խախտում է երեւույթների ընթացքը», «ատոմային օբյեկտների ֆիզիկական հատկությունները ստեղծվում են նրանց չափման միջոցով» և այլն¹⁹: Ն. Բորն այն եզրակացության է հանգում, թե գիտության ներկա զարգացումը որոշ բառերի կիրառման համար նոր հիմքեր է ստեղծում: Միևնույն ժամանակ նա նշում է այն հանգամանքը, որ գիտության մեջ որոշ բառերի և դարձվածքների կիրառումը հազիվ թե համատեղելի է դրանց առօրյա, սովորաբար ընդունված նշանակության հետ: Ուստի նա ընդգծում է տերմինների աստիճանական կատարելագործման անհրաժեշտությունը, տերմիններ, որոնք կիրառելի լինեին, տվյալ դեպքում, ֆիզիկական գիտության մեջ և հնարավորություն տալին վերլուծությանն ու ընդհանրացմանը ընդհանուր-փիլիսոփայական տեսանկյունից:

§ 8. Հարցի նախնական քննարկումը (տե՛ս § 5—7) նախապատրաստում էր փիլիսոփայության լեզվի կարևոր առանձնահատկություններից մեկի բացահայտումը: Փիլիսոփայության լեզվի համար թերևս ամենաբնորոշն այն է, որ նա առօրյա հասկացությունները դիտում է որպես էֆալիկանդներ (լավ ծանոթ, բայց ոչ ստույգ հասկացություններ) և էֆալիկացիայի ենթարկելով (=ճշգրտելով) դրանք, փոխարինում է էֆալիկատներով (=նոր, ստույգ հասկացություններով)²⁰:

§ 9. Միայն նշված էֆալիկացիայի միջոցով կարելի է փիլիսոփայական գիտությունում հասնել հասկացությունների այն ծայրագույն ճշգրտության և պարզությանը, որոնցով գիտության լեզուն, Ա. էյնշտեյնի բնութագրմամբ, տարբերվում է լեզվից առօրյա իմաստով²¹:

¹⁸ У. Со́йер, *նշվ. աշխ.*, էջ 17.

¹⁹ Ն. Բոր, Ատոմային ֆիզիկան և մարդկային իմացությունը, Երևան, 1963, էջ 113, 121, 128 և այլն:

²⁰ Ընդգծված տերմինները օգտագործվում են կառնապյան իմաստով (Р. Карнап, *Значение и необходимость*, М., 1959, стр. 36. Հմմտ. R. Carnap, *Meaning and Necessity*, Chicago, Illinois, 1956, p. 7—8; R. Carnap, *Logical Foundations of Probability*, The University of Chicago Press, 1963, p. 3).

²¹ А. Эйнштейн, *Общий язык науки* («Эйнштейновский сборник, 1966», отв. ред. И. Е. Тамм, Б. Г. Кузнецов, М., 1966, стр. 13).

Կարելի է լզնգել, որ բառիմաստի ճշգրտումը փիլիսոփայությունում ունի բացառիկ նշանակություն: Դա՝ այն պատճառով, որ փիլիսոփայության կատեգորիաները, նախ և առաջ, նրա ելակետային հասկացությունները խորհրդանշում են վերացարկման և ընդհանրացման բարձրագույն մակարդակներ: Իսկ նման դեպքում լեզուն, ինչպես նշում է Ա. էյնշտեյնը, դառնալով մտածողության գործիքը բառի իսկական իմաստով, միևնույն ժամանակ սխալների և պատրանքների աղբյուր կարող է ծառայել:

Կարելի է արդյոք, պնդել, թե էքսպլիկացիայի հետևանքով փիլիսոփայության մեջ մենք գործ ենք ունենում օգտագործվող բառերի միանշանակության հետ, մի բան, որ հատուկ է, բնորոշ գիտության լեզվին ընդհանրապես: Այս հարցին չի կարելի տալ միանշանակ պատասխան: Եթե խոսքը վերաբերում է տերմինի միանշանակությանը փիլիսոփայության մեջ ընդհանրապես, ապա մենք չենք կարող հասնել այդ պահանջի հետևողական իրականացման: «Օբյեկտիվ ճշմարտություն» հասկացությունն իր որոշակի բովանդակություն ունի դիալեկտիկական մատերիալիզմի իմացաբանության մեջ, և միևնույն ժամանակ անիմաստ կլինի ենթադրել, թե այդ հասկացությունը նույն իմաստով կարող է օգտագործվել տարբեր փիլիսոփայական համակարգերում: Եվ սա մի նմուշ է միայն: Հսկանդիսյում հրատարակվել է մի հատուկ բառարան²², որի հեղինակն ակնկալում է ցույց տալ, թե ինչ առանձնահատուկ իմաստ ունի այս կամ այն փիլիսոփայական տերմինը դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի համակարգում: Նման իմաստով բնորոշ է այնպիսի գրքի գոյությունը, ինչպիսին է «Հունական փիլիսոփայական տերմինները»²³:

Հիմք ընդունելով էքսպլիկացիայի պահանջը փիլիսոփայության մեջ, անհրաժեշտ է տերմինները միանշանակ կիրառել տվյալ փիլիսոփայական համակարգում: Այլ կերպ ասած, փիլիսոփայական տերմինների միանշանակությունը պետք է իրականացվի ոչ թե փիլիսոփայությունում ընդհանրապես, այլ յուրաքանչյուր փիլիսոփայական համակարգում:

Փիլիսոփայության լեզվի նշված յուրօրինակությունը բխում է փիլիսոփայության այն առանձնահատկությունից, որ տարբեր գոյաբանական նախադրյալները պայմանավորում են տվյալ փիլիսոփայական համակարգի մեթոդը, իմացաբանությունը, տրամաբանությունը, հասկացության կազմի բովանդակությունը և բնույթը: Միևնույն ժամանակ փիլիսոփայության լեզվի այս առանձնահատկությունը ա) մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ կան տարբերություններ գիտության տարբեր լեզուների միջև և բ) հաստատում է այն թեզը, թե փիլիսոփայության և մյուս գիտությունների միջև տարբերություններ ընդհանրապես ավելի կարևոր են, քան փիլիսոփայության և ամեն մի այլ գիտության միջև տարբերությունները՝ փիլիսոփայական գիտելիքի առանձնահատկությունների բացահայտման համար:

§ 10. Քանի որ տարբեր փիլիսոփայական համակարգեր յուրովի կարող են օգտագործել փիլիսոփայական տերմինները, հատուկ նշանակություն է ստա-

²² K. Bullestrom, Russian Philosophical Terminology, D. Reidel Publishing Company, 1964.

²³ F. E. Peters, Greek Philosophical Terms, New York, London, 1967.

նում հերմենևիտիկան, որն ուսումնասիրում է հեղինակավոր տեքստերի վերլուծության և մեկնաբանման սկզբունքները²⁴:

§ 11. Լեզվի շարահյուսական ֆունկցիայի տեսակետից ևս փիլիսոփայությունը որպես գիտություն որոշակի առանձնահատկություններ ունի: Այն հարցը, թե կարելի է արդյոք փիլիսոփայության լեզուն կառուցել որպես շարահյուսական համակարգ, ըստ էության հանգում է փիլիսոփայության լրիվ ձևայնացման խնդրին: Փիլիսոփայությունը որպես սինթետիկ մտքի դրսևորում իր բնույթով սկզբունքորեն ենթակա չէ ձևայնացման, ուստի փիլիսոփայության լեզուն չի կարելի հանգեցնել լոկ նրա շարահյուսական ֆունկցիային:

Եթե աքսիոմատիկ-դեդուկտիվ տեսություններում գիտության լեզվի շարահյուսությունը հանգում է սիմվոլների կիրառման որոշակի կանոններին, ապա փիլիսոփայության լեզվի շարահյուսական ֆունկցիան դրսևորվում է տրամաբանական այն հնարների մեջ, որոնցով հիմնավորվում է սովալ փիլիսոփայական համակարգը: Դիալեկտիկական մատերիալիզմում այդ հնարներն են տրամաբանականի ու պատմականի միասնությունը, վերացականից դեպի կոնկրետին անցումը և այլն:

Քանի որ փիլիսոփայության մեջ չեն տարբերվում ինչպես քննարկման բովանդակային, ձևական և ձևայնացված տարրերը, այնպես էլ հետազոտության էմպիրիկ և տեսական մակարդակները, ուստի փիլիսոփայության լեզվի իմաստաբանական և շարահյուսական ֆունկցիաները չեն կիրառվում ինքնուրույն, իրարից անկախ, այլ հանդես են գալիս միասնաբար, որպես հակադրամիասնության տարբեր կողմեր:

§ 12. Ինչպես և այլ գիտություններում, փիլիսոփայության բնագավառում նույնպես հնարավոր է, իսկ երբեմն նաև անհրաժեշտ, փիլիսոփայական գիտության մի բաժնի հատուկ լեզվից անցում կատարել մյուս բաժնի լեզվին, ասենք դիալեկտիկական մատերիալիզմի լեզվից՝ պատմական մատերիալիզմի լեզվին: Նման անցման օգուտն իր նշանակությամբ սկզբունքորեն նույնն է, ինչ նկարագրված է § 4-ում, որտեղ տրված է Ու. Սոյերի մեկնաբանությունը մատթեմատիկայի մի բաժնի լեզվից մի այլ բաժնի լեզվին անցնելու վերաբերյալ:

Քանի որ լեզուն բաղկացած է մի շարք իմաստային շերտերից, փիլիսոփայության մեջ կիրառվող հասկացութային կազմը էքսպլիկացիայի ենթարկելիս նպատակահարմար է դիմել տրանսֆորմացիոն տրամաբանությանը: Ելնելով տարբեր տրամաբանական գիտությունների գոյության հավասար հնարավորությունից, տրանսֆորմացիոն տրամաբանությունը ցույց է տալիս, թե ինչպես անցում կատարելով տրամաբանական հետազոտության մի մակարդակից դեպի մյուսը, մի գիտական համակարգից մյուսը, բացահայտվում են մտքի նոր հատկություններ, լեզվական իրողության մեջ պարուրված խորքային նոր իմաստներ²⁵:

²⁴ Հերմենևիտիկայի նման ըմբռնումը հենվում է այն մեկնաբանման վրա, որ տրված է հետևյալ բառարանում: D. D. Rues, Dictionary of Philosophy, Littlefield, Adams and Co. Totowa, New Jersey, 1967, p. 126.

²⁵ «Տրանսֆորմացիոն տրամաբանություն» հասկացությունն առաջին անգամ առաջադրվում է սովյալ հոդվածում: Նրա բնույթի և էության քննարկումը դուրս է հետազոտվող հարցի շրջանակներից, այն քննարկման խնդիր կդառնա հատուկ հոդվածում:

К ВОПРОСУ О ЯЗЫКЕ ФИЛОСОФИИ

Г. А. БРУТЯН

Член-корр. АН Арм. ССР

Резюме

Язык философии имеет семантический и синтаксический аспекты. В первом аспекте язык философии гораздо больше сращивается с семантикой повседневного языка и языков конкретных наук, чем семантика языка любой другой науки. Это обусловлено спецификой философского знания. Понятия, заимствованные из повседневной жизни и из других наук, рассматриваются в языке философии как экпликанды и эксплицируются в экпликаты.

Если в дедуктивно-аксиоматических системах синтаксис языка сводится к правилам оперирования определенными символами, то синтаксическая функция языка философии проявляется в системе тех логических приемов, посредством которых обосновывается данная философская теория.

2